



Ս Փ Յ Ռ Ի Ռ Ք Ո Ւ Խ

Բ Ա Զ Մ Ա Վ Ա Ս Տ Ա Կ Ո Ւ Ս Ո Ւ Ց Ւ Յ Ե

Հովհաննեսին լրանում է սփյուռքահայ բազմավաստակ ուսուցիչ, անխոնչ կրթական մշակ և դաստիարակ Գրիգոր Պողարյանի մանկավարժական և հասարակական գործունեության 40-ամյակը:


Վաստակավոր և կրթանվեր ուսուցչի և մտավորականի հորելայանը նշում են նրա բազմաթիվ աշակերտները, գրի ու գաղափարի ընկերները, ինչպես նաև հայ մամուլը՝ հարգանքով և երախտագիտությամբ:

Գրիգոր Պողարյանը սրտառուշ և գերազանց տիպարն է հայ ուսուցչի և դաստիարակի, և նա երկար կապրի իր ուսանողների հիշողության մեջ որպես այդպիսին:

Գրիգոր Պողարյանի մոտ ուսուցչությունը տարերք է: Նա ծննվել է որպես ուսուցիչ, ինչպես մի ուրիշը ծնվում է որպես բանաստեղծ կամ արվեստագետ: Եվ պատահական չեր, որ նա իր ամբողջ գիտակցական կյանքը, անսպառ եռանդը, բազմակողմանի և խոր գիտելիքները, առանց մնացորդի, նվիրել է Սփյուռքում և հատկապես Սիրիայում և Լիբանանում հասակ նետող հայ նոր սերնդի հայագրոշմ դաստիարակության գործին:

Հազարների է հասնում թիվը նրա աշակերտների, որոնք մեր մեծասրբանշ լեզվի քաղցրությունն ու ճաշակը, հայ մշակույթի և պարության սերը, հայրենասիրության իրավ զգացմունքը, Հայ եկեղեցու և մեր հոգևոր արժեքների նկատմամբ պաշտամունքն ու նվիրվածությունը ստացել են Գրիգոր Պողարյանից:

Այսօր, նույն շնչի ու նայվածքի տակ կրթված, դաստիարակված շատ երիտասարդներ, Սփյուռքում պատասխանատու և ղեկավար դիրքեր են գրավել հայ կյանքում, որպես ուսուցիչ, գրող, արվեստագետ, հասարակական գործիչ և հոգևորական:



Գրիգոր Պողարյանը քսաներորդ դարի երկրորդ կեսի հայ մանկավարժության և դպրոցավարության պատմության մեջ իր ուրույն տեղն է գրավում մեր մեծանուն այլ մանկավարժների կողքին:

Բազմավաստակ ուսուցիչ Գրիգոր Պողարյանը ծնվել է 1897 թվականին Այնթապում, ուր և ստացել է իր նախնական կրթությունը Վարդանյան կրթարանում, ապա իր ուսումը կատարելագործել Կիլիկյան ճեմարանում, ընդմիշտ իր կյանքն ու գործունեությունը կապելով մանկավարժական աշխատանքների հետ: Երկար տարիներ նա Լիբանանում և Եգիպտոսում վարել է Ազգային Սիրության և Հայկական որբանոցի քարտու-

ղար-ուսուցչի պաշտոնը, մինչև 1926 թվականը, երբ հըավիրվել է Հալեպ, որպես Ալինթապիների Կրթասիրաց երկսեռ վարժարանների ուսուցիչ և ապա տեսուչ, պաշտոն՝ որը վարել է նաև ձեռնհասորեն և փայլում արժանավորությամբ, մոտ 25 տարի։ Դրիգոր Պողարյանը միաժամանակ գործում մասնակցություն է ունեցել Հալեպի ազգային-եկեղեցական կյանքում՝ որպես Ազգային վարչության, Ուսումնական խորհրդի, Ազգային գավառական ժողովի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կրթական հանձնաժողովի, Հալեպահայ ուսուցչական միության և այլ ուսանողական, բարեսիրական, հայրենասիրական, հայրենակցական միությունների անդամ, նախագահ, կազմակերպիչ և դասախոս։

Դրիգոր Պողարյանը ուսուցչական, մանկավարաժամանական և հասարակական գործունեության 40-ամյակի ուրախ առիթով, նրա մոտիկ և հեռավոր բազմաթիվ աշակերտների սրտագին մաղթանքն է, որ սիրելի հորելիարը երկա՞ր, զեռ երկա՞ր ապրի, շարունակելու իր շնորհակալ գործունեությունը հօգուտ հայդրոցի, մեր մշակույթի և մեր ժողովրդի։

Ներով։ Ուսումնասիրել է Այնթապի գրչագրերը և Այնթապի կորած գավառաբարբառը։ Միաժամանակ նա աշխատակցել է բազմաթիվ առաջադիմական թերթերի՝ կուռ և բովանդակալից հոդվածներով, ուսումնասիրություններով և ակնարկներով։

Միշտ անթառամ կմնա աշակերտների հրախտագետ սրտերում բազմավաստակ ուսուցչի, դաստիարակ-մանկավարժի և հասարակական գործչի, ինչպես նաև ազնիվ ու հայրենասեր հայ մարդու՝ հորելիար Դրիգոր Պողարյանի պայծառ կերպարը։

Դրիգոր Պողարյանի մանկավարժական, կրթական, հասարակական գործունեության 40-ամյակի ուրախ առիթով, նրա մոտիկ և հեռավոր բազմաթիվ աշակերտների սրտագին մաղթանքն է, որ սիրելի հորելիարը երկա՞ր, զեռ երկա՞ր ապրի, շարունակելու իր շնորհակալ գործունեությունը հօգուտ հայդրոցի, մեր մշակույթի և մեր ժողովրդի։

